

րութիւնը եղած է վէպին, քնարերգութեան ու ձեւին: Տոստաման գոյութիւն ունեցած է առաջին օրէն, որովհետեւ մարդ առաջին իսկ օրէն ձգտած է հաճոյքի, կերուխումի, պոռթկումի եւ շարժումի, ուղած է յազենալ երեւակայութեամբ, աչքերով ու ազանջներով մէկէն:

Եղած են նոյնիսկ դիտնականներ, ինչպէս Ա. Վեսելովսկի, որոնք հիմնուելով ազգագրական նիւթերու տուեալներուն վրայ կը պնդեն, թէ ամենահին ժամանակներու մէջ բանաստեղծութեան այդ երեք ճիւղերն ալ, — վէպը, քնարերգութիւնը եւ տոստաման, — միախառնուած էին ընդհանուր ձեւի մը մէջ եւ յետոյ միայն սկսան իրարմէ բաժնուիլ: Եւ արդարեւ ժողովրդական վէպը, ի սկզբան, կ'երգուէր ու կը պատմուէր միանգամայն, ու իրեն կ'ընկերանային յաճախ երաժշտական գործիքները, պարը, մնջկատակը: Ասոնք բոլորը յետոյ էր որ բաժնուեցան իրարմէ ու առանձին առանձին արուեստներ կազմեցին:

Հիմա ալ նոյնիսկ, նախնական ժողովուրդներու քով, վէպը, երգն ու պարը կը միանան տեսակ մը համադրութեան մէջ: Անոնք անբաժան են իրարմէ: Մարդկային երեւակայութիւնն ու զգայարանքները հաւաքաբար ստեղծած են զանոնք: Տեսակ մը բեմադրութիւն, ուր երեւակայութիւնը կեանքին կը կապուի, հմայելով ու զուարճացնելով հանդիսատեսը:

* * *

Այդպէս է եղած եւ մեր մէջ: Հայ ժողովրդական վէպը, որուն հատուկտորներն են միայն, որ մեզի հասած են Գողթան Երզեր անունով, ուրիշ բան չէր, բայց եթէ տեսակ մը տոստամ, — համադրութիւնը վէպին, երգին ու խաղին: Հայ գուսանները, ինչպէս եւ ժողովրդական երգիչները ուրիշ ազգերու մէջ, ոչ միայն կը պատմէին, այլ եւ կ'երգէին, կը պարէին, կը ներկայացնէին դիմախաղով ու մրնջկատակով, ու իրենց կ'ընկերանար երաժշտական գործիքը՝ բամբուլը:

Բարեբախտաբար փաստեր ունինք մեր ձեռքը:

Նախ՝ Գողթան Երզերը, եթէ չեն ամբողջ դիւցազներգութեան մը մասերը, գոնէ մա-

սերն են զանազան ամբողջական դրուագներու, որոնք կը ներկայացուէին:

Ապացոյց՝ ամենէն առաջ, Գողթան Երզերու նիւթը, գոնէ անոնցը, զոր Սորենացին կը հասցնէ մեզի կամ որոնց իմաստը կուտայ ան: Այդ երգերը ամբողջական որոշ դրուագներու մասերն են: Անոնք իրենց միջեւ ամբողջութիւն մը կը կազմեն, — Արտաշէսի կեանքը պատմող երգերը, օրինակի համար: Չէին կրնար առանձին գեղօճներ ըլլալ, որովհետեւ թէեւ անջատ հատուածներ, բայց հոգեբանօրէն կապուած են իրարու: Դիպուածի արդիւնք չէր պտտիլը, միեւնոյն հերոսին կեանքը պատմելը: Յետոյ անոնք բոլորը զիրար կը լրացնեն, մինչդեռ իրենք իրենց մէջ ամբողջական պիտի ըլլային, եթէ առանձին գեղօճ մը ըլլար անոնց ամէն մէկը:

Բայց այդ մասին աւելի պերճախօս փաստեր կը գտնենք նոյն ինքն Գողթան Երզերու կազմութեանը մէջ: Առնենք Արտաշէսի նըւիրուած երգերը, այսինքն՝ անոնք, որ մեզի հասած են: Ասոնց մէկ մասը առաջին դէմքով է, այսինքն՝ հերոսն է, որ կը խօսի երգիչին բերնով: Ուրիշ խօսքով դերակատար մըն է, որ կ'անձնաւորէ հերոսը, կը կատարէ անոր դերը: Նիւթին զուտ թատերական մասն է աս: Դժբախտաբար, շատ քիչ հասած է մեր ձեռքը ասոնցմէ: Երգերուն մնացեալ մասը երբորդ դէմքով է, այսինքն՝ երգիչը ինքն է որ կը պատմէ, ուրիշ խօսքով կը լրացնէ նիւթը:

Բաղդատելով զանոնք հելլէն թատերական երկերու կազմութեանը հետ, կը ստիպուինք եզրակացնել, թէ այդ վերջին երգերը պարերգուններու վիճակուած մասերն են:

Այսպէս՝ Արտաշէսի Ալաններու դէմ յաղթանակը եւ Ալաններու արքայադուստր Սաթենիկի առեւանգումը կը պատմէ պարերգուններու խումբը: Արդէն հատուածին կազմութիւնն իսկ ցոյց կուտայ, թէ իմբական է երգը, արտասանելի հաւաքական շարժումով:

Հեծաւ արի արքայն Արտաշէս
Ի Սեւան գեղեցիկ
Եւ հանեալ գոսկէօդ
Շիկափոկ պարանն
Եւ անցեալ որպէս զարծուի